

ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՇՏՈՐ ԱՆ ԱՍԱՏ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՆԵՅԱԿԱՆ ԱՊՈՒՆԱԳՈՒՄԻ ԳԱԶԱԺՈՒՄՆԵՐԻՆ՝ ՇԵՅԽ ՍՈՒՀԱՍՄԵՏ ՊՐԵ ՉԱՅԵՏ ԱՆ ՆԱՀԻԱՆԻ ՀԵՏ

Ուրբաթ, 18 Մարտ 2022-ին, Սուրիոյ Նախագահ Պաշտար ալ Ասատ, իրեն ընկերակցող պատուիրակութեան ընկերակցութեամբ, Արաբական Միացեալ Էմիրութիւններ կատարած այցելութեան ընթացքին հանդիպում ունեցաւ Ապու Տապիի գահաժառանգ շէյխ Սուհամմետ պըն Չայետ ալ Նահիան իշխանին եւ Տուպայի կառավարիչ Սուհամմետ պըն Ռաշետ ալ Մաթթումին հետ: Շէյխ Չայետ այս հանդիպումը համարեց գոյգ երկիրներու երբայրական յարաբերութիւններու պահպանման եւ այլազան հարցերու լուծման գծով խորհրդակցելու պատրաստակամութեան արտայայտութիւն:



Ան շեշտեց, որ Սուրիոյ դերը Եական Է արաբական անվտանգութեան համակարգի պահպանման մէջ, այս իսկ պատճառով Էմիրութիւններու պետութիւնը ջատագովն է Սուրիոյ ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան պահպանման:

Իր կարգին, Նախագահ Ասատ շեշտեց, որ Էմիրութիւններու դերը տարածաշրջանային հարցերու լուծման մէջ կարեւոր է, որովհետեւ ան հաւասարակշռած քաղաքականութիւն կը վարէ ո՛չ միայն արաբական, այլեւ միջազգային հարցերու պարագային:

ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏ ԸՆՊԻՆԵՅ ԻՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԸ. ՔՆՆԱՐԿՈՒԵՅՄՆ ԵՐԿՈՒ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ ԱՌԿԱՅ ԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐԸ

Սուրիոյ Նախագահ Պաշտար ալ Ասատ Չորեքշաբթի, 23 Մարտի առաւօտեան ընդունեց Իրանի արտաքին գործոց Նախարար Զուսէյն Ամիր Ապտուլլահեանը եւ անոր ընկերակցող պատուիրակութիւնը:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան երկու երկիրներու միջեւ առկա գործակցութեան փաստաթուղթերը եւ երկկողմ համաձայնագրութիւններու իրականացման ջանքերը, յատկապէս տնտեսական եւ առեւտրական ոլորտներուն մէջ, հակառակ Արեւմուտքի կողմէ երկու երկիրներուն դեմ ձեռնարկուող անօրինական միակողմանի քայլերուն:



Կողմերը համաձայնեցան աշխուժացնելու միատեղ կապերը, որոնք կը ծառայեն Իրանի եւ Սուրիոյ ժողովուրդներու շահերուն:

Հանդիպման ընթացքին խօսուեցաւ նաեւ ահաբեկչութեան դեմ պայքարի ոլորտին մէջ երկու երկիրներու գործակցութեան շարունակման մասին: Ապտուլլահեան վերահաստատեց իր երկրին աջակցութիւնը Սուրիոյ եւ անոր ժողովուրդին մինչեւ սուրիական բոլոր տարածքներու ազատագրումը՝ համարելով, որ Սուրիոյ յաղթանակը կարեւոր է տարածաշրջանի կայունութեան համար:

Ապտուլլահեան Նախագահ Ասատին ներկայացուց Իրանի միջուկային համաձայնագիրին շուրջ ընթացող բանակցութիւնները եւ յայտնեց, որ իր երկիրը Նախաձեռնութիւններ ունի այդ առումով՝ համահունչ Իրանի ժողովուրդին իրաւունքներուն եւ շահերուն՝ ընդգծելով, որ համաձայնութեան հասնելու համար արեւմտեան երկիրները կամքի ուժ պէտք է դրսեւորեն՝ արձագանգելու Իրանի Նախաձեռնութիւններուն:

Նախագահ Ասատ հաստատեց այս իմաստով Իրանի որդեգրած սկզբունքային քաղաքականութեան ճշգրտութիւնը, նկատի ունենալով, որ քաղաքականութեան մէջ չկան ցանկութիւններ, այլ կան չափանիշներ եւ սկզբունքներ: Նախագահը դիտել տուաւ, որ Իրանի միջուկային թղթածրարին շուրջ համաձայնութեան հասնիլը շատ կարեւոր է Իրանի եւ տարածաշրջանի շահերուն համահունչ համաշխարհային հաւասարակշռութեան համար:

Կողմերը կարծիքներ փոխանակեցին նաեւ քաղաքական շարք մը հարցերու, որոնք շարքին Ուքրանիոյ մէջ Ռուսիոյ զինուորական ներկայութեան շուրջ:

ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՇՏՈՐ ԱՆ ԱՍԱՏ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՆԵՅԱԿԱՆ «ԵԿԵՂԵՅԻՆ ՍԻՐՈՅ ՏՈՒՆ» ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԱՍՆԱԿԻՅՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Շաբաթ, 19 Մարտ 2022-ին, Սուրիոյ Նախագահ Պաշտար ալ Ասատ հանդիպում ունեցաւ «Եկեղեցին Սիրոյ Տուն» խորագիրը կրող համագումարի մասնակիցներուն հետ, «Էպլա» պանդոկի համագումարներու սրահէն ներս:

Հանդիպումին իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան:

Նախագահ Ասատ համագումարի մասնակիցներուն հետ իր գրոյցին ընթացքին յայտնեց, որ դաւանանքին կողքին կարեւոր է նաեւ հասարակութեան կենցաղային վիճակի բարելաւման նպատակը: Հետեւաբար, համագումարը իր եկեղեցական եւ հասարակական բնոյթով քանի մը ուղերձ կը յղէ, յատկապէս շեշտելով, որ կրօնական եւ ընկերային հաստատութիւններուն դերը Սուրիոյ մէջ չի սահմանափակուիր միայն կրօնական ծառայութեամբ, այլեւ կ'ընդգրկէ հասարակական կեանքին նպատակը անոնց կառուցողական դերակատարութիւնը: Անոնք առանց խտրութեան օժանդակութիւն կը տրամադրեն բոլորին եւ կը վկայեն, որ Սուրիոյ մէջ քրիստոնէայ քաղաքացին հիւր չէ, ո՛չ ալ ժամանակաւորապէս այստեղ կայք հաստատած քաղաքացի: Ան գործակից է: Իսկ գործակցութիւնը կ'արտայայտուի աշխատանքով ու արտադրութեամբ:



Նախագահը շեշտեց նաեւ, որ քրիստոնէաները այս շրջանէն գաղթի մղելը հիմնական նպատակն է արտաքին ուժերու, յատկապէս Իսրայէլի, տարածաշրջանին գծով վարած քաղաքականութեան ու ծրագիրներուն, որովհետեւ շրջանի երկիրները համայնքային եւ տարբեր գոյնի փոքր երկիրներու վերածելով, Իսրայէլի ներկայութիւնը տոյն շրջանին մէջ կը դառնայ օրինական: Հետեւաբար, հարկ է պահել մեր երկրի ընկերութեան գունեղ եւ միասնական դրուածքը:

Հանդիպումի ընթացքին, քրիստոնէայ եկեղեցիներու հոգեւոր պետերը

Շար. 19 2

ԱՐՅԱՍԻ ՄԵՅ ԿԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ ԿՐԿԻՆ ԽԱՓԱՆՈՒԵՅԱԿ

Արցախի տեղեկատուական շտապը յայտարարութիւն մը տարածելով յայտնեց, որ Ատրպէյճանի ուղղակի միջամտութեամբ Արցախի Հանրապետութեան մէջ կազամատակարարումը կրկին խափանուած է:

«Մենք ունինք բաւարար հիմքեր այնչէրու, որ 8 Մարտին պայթեցուած կազատարի վերանորոգման աշխատանքներուն ընթացքին ատրպէյճանական կողմը տեղադրած է փական, որուն միջոցով ալ ժամեր առաջ դարձրեցուցած է կազամատակարարումը: Ատրպէյճան ստեղծուած եղանակային անբարենպաստ պայմանները կը ծառայեն մեր ազգաբնակչութեան համար մարդասիրական լրացուցիչ հարցեր յառաջացնելու նենգ գործին եւ կը դիմէ յանցաւոր քայլի:



Իրավիճակի մասին անմիջապէս տեղեկացուած է Արցախի մէջ տեղակայուած ռուսական խաղաղապահ զօրակազմի իրամասնատարութիւնը, որուն հետ միասին Արցախի իշխանութիւնները ի գործ կը դնեն համապատասխան ջանքեր՝ կազամատակարարման վերականգնումին համար:

Միեւնոյն ժամանակ կը յորդորենք քաղաքացիները ըստ կարելոյն խնայողաբար օգտագործել էլեկտրական հոսանքը՝ խուսափելու համար էլեկտրամատակարարման համակարգի հաւանական խափանումներէն», ըսուած է յայտարարութեան մէջ:

Էություն Հայաշխարհին

ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼԵԱՆ. «ՀՀ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹՈՒՐԲՈՅ ԵՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՀԵՏ ԵՈՐ ՓԱՏՏԱԹՈՒՂԿ ԿԸ ՔՆՆԱՐԿԵՆ»

ՀՀ Ազգային ժողովի փոխխոսնակ, «Հայաստան» խմբակցության պատգամաւոր Իշխան Սաղաթելեան լրագրողներու հետ գրոյցի ընթացքին ըսաւ, որ Ատրպէյճան եւ Թուրքիա չեն կրնար ազնիւ ըլլալ իրենց մղումներուն մէջ, որովհետեւ բացայայտօրէն, բռնազբաւուած Շուշիի մէջ ստորագրուած հռչակագիրով հաստատուեցին, որ կը միտին մեր պետութիւնը վերացնել:



«Օրուան իշխանութիւնները այս չեն հասկնար եւ երկիրը կը տանին դէպի անդունդ: Ինչ կը վերաբերի բուն բանակցութիւններուն, աւելին ըսեմ՝ իրենք փաստաթուղթ մը կը քննարկեն, այլապէս ամէն անգամ ի՞նչ ընելու համար կը հաւաքուին: Հաւանաբար կը քննարկեն փաստաթուղթ մը եւ կը փորձեն որոշ հարցերու շուրջ համաձայնութեան հասնիլ:

Եթէ խօսքը սահմաններու բացման եւ յարաբերութիւններու կարգաւորման մասին է, ատիկա կարելի էր մէկ գրութեամբ կարգաւորել, բայց պարզ է, չէ՞, որ խօսքը ուրիշ հարցերու մասին, նախապայմաններու մասին է՝ թաքնուած կամ բացայայտ: Այս պարագային շատ մը գործողութիւններ Թուրքիան կը համակարգէ Ատրպէյճանի հետ», ըսաւ Սաղաթելեան:

ՀՀ ԱԳՆ. «ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ 120.000 ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ ԶՐԿՈՒՄ Է ԿԱԶՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԷ, ՄԻՋԱՉԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹԵԱՆ ՅՍՏԱԿ ԱՐՁԱԳԱՆԳԸ ՀՐԱՏԱՊ Է»

Երեքշաբթի, 22 Մարտ 2022-ին, ՀՀ Արտաքին գործոց նախարարութիւնը հանդէս եկած է հետեւեալ հաղորդագրութեամբ.

«Ատրպէյճանական կողմի ակնյայտ միջամտութեամբ Շուշի քաղաքի մօտակայքում՝ Ատրպէյճանական վերահսկողութեան տակ գտնուող տարածքում, կրկին խախտուել է Հայաստանից բնական կազի մատակարարումը Լեռնային Ղարաբաղ: Այսպիսով, ձեան աննախադէպ տեղումների եւ աննախադէպ ցրտաշունչ եղանակային պայմաններում Լեռնային Ղարաբաղի շուրջ 120.000 բնակչութիւնը զրկուել է կենսական անհրաժեշտ կազամատակարարումից:



Ընդամենը մի քանի օր առաջ Ատրպէյճան 8 օր շարունակ թոյլ չէր տալիս աշխատանքներ իրականացնել Լոյն տեղանքում չպարզուած հանգամանքներում վթարուած կազատարի վերանորոգման ուղղութեամբ:

Այսպիսով, բացի Լեռնային Ղարաբաղի բնակչութեան նկատմամբ հոգեբանական ճնշում գործադրելուն ուղղուած իր միւս շարունակական գործողութիւններից եւ Լեռնային Ղարաբաղ միջազգային մարդասիրական կառոյցների մուտքը խոչընդոտելուց, Ատրպէյճան միտումնաւոր կերպով խաթարում է Լեռնային Ղարաբաղում կենսական նշանակութիւն ունեցող ենթակառուցուածքների բնական աշխատանքը, ինչն ակնյայտօրէն յանգեցնում է Լեռնային Ղարաբաղում մարդկային ճգնաժամի ստեղծմանը: Անթոյլատրելի ենք համարում արցախահայութեան նկատմամբ սխտեմատիք բռնութեան այս աղաղակող քաղաքականութիւնը:

Ստեղծուած իրավիճակը հրատապ է դարձնում մարդկային ճգնաժամի կանխման նպատակով միջազգային հանրութեան յստակ արձագանգը, ինչպէս նաեւ միջազգային մարդասիրական կառոյցների ակնյայտ եւ անխոչընդոտ ներգրաւուածութիւնը Լեռնային Ղարաբաղում»:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԵՒ «ՊԱՏԻՒ ՈՒՆԵՄ» ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԻԱՏԵՂ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԵՒ «ՊԱՏԻՒ ՈՒՆԵՄ» խմբակցութիւնները երեքշաբթի օր հետեւեալ միացեալ յայտարարութիւնը հրապարակեցին.

«Յարգելի՛ հայրենակիցներ,

«Հայաստան» եւ «Պատիւ Ունեմ» խմբակցութիւններն Ազգային ժողովի օրակարգ էին մտցրել «Արցախի Հանրապետութեան եւ Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ Ատրպէյճանի շարունակական յարձակողապաշտութեան եւ ահաբեկչութեան վերաբերեալ»



Ազգային ժողովի յայտարարութեան նախագիծ՝ ներքոյ շարադրեալ բովանդակութեամբ, որի ընդունումը «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցութեան կողմից տապալուեց:

Տապալելով Ազգային ժողովի անուկից յայտարարութեան ընդունումը, ապագային այս իշխանութիւնը հերթական անգամ խոչընդոտեց մեր Ազգային ու պետական շահերի առաջ մղման կարելոր քայլը:

Ուշադրութիւն՝ տապալուեց մի յայտարարութիւն, որի հիմնական նպատակն էր Ատրպէյճանի շարունակական յանցագործութիւնները յստակ ամբողջել, դրանց վրայ միջազգային հանրութեան ուշադրութիւնը հրաւիրել, Թուրքիայի ու Ատրպէյճանի հակահայկական քաղաքականութեան քաղաքական գնահատական տալ:

Այս իշխանութիւնը հերթական անգամ ապացուցեց, որ ոչ միայն ինքը չի հակազդում թուրք-ատրպէյճանական օրակարգի քաղաքական, ռազմական, հոգեբանական, տնտեսական ճնշման, այլեւ՝ կանխում ու արգելափակում է ընդդիմութեան ցանկացած նախաձեռնութիւն:

Առաւել քան յստակ է, որ Ազգային ու պետական շահերից բխող որեւէ քայլ այս իշխանութիւնից ակնկալելի ուղղակի միամտութիւն է: Մեր պետականութիւնն ու հայրենիքը վերջնականապէս չկորցնելու համար մնում է միայն մէկ բան՝ արագ համախմբուել եւ կտրուկ քայլերով պայքարել՝ օր առաջ այս իշխանութիւնից ազատուելու համար:

Միաժամանակ, հաշուի առնելով յայտարարութեան ընդունման տապալումն Ազգային ժողովում խորհրդարանական ընդիմադիր երկու՝ «Հայաստան» եւ «Պատիւ Ունեմ» խմբակցութիւնները հանդէս են գալիս հետեւեալ յայտարարութեամբ.

Հաշուի առնելով Ատրպէյճանի Հանրապետութեան շարունակական յարձակողապաշտութիւնը եւ ահաբեկչութիւնը Արցախի Հանրապետութեան եւ նրա ժողովրդի, ինչպէս նաեւ ակնյայտ ոտնձգութիւնը Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան նկատմամբ, այդ թւում՝

1. Արցախի Հանրապետութեան բնակչութեան կազամատակարարման վերականգնմանը խոչընդոտելը, ինչը ստեղծում է մարդկային աղետ,
2. Արցախի բնակավայրերի թիրախաւորումը տարատեսակ զինատեսակներով,
3. Արցախի Հանրապետութեան քաղաքացիների նկատմամբ հոգեբանական ահաբեկչութիւնը՝ շփման գծի երկայնքով բարձրախօսների կիրառմամբ եւ սեփական տներն ու հայրենիքը լքելու կոչերով,
4. Արցախի Հանրապետութեան հայաթափման նպատակով իրականացուող անթաքն գործողութիւններն ու կոչերը,
5. Բոլոր հնարաւոր միջոցներով Ռուսաստանի Դաշնութեան խաղաղապահ առաքելութեան հետեւողական հեղինակագրկումը՝ նպատակ ունենալով վերացնել Արցախի Հանրապետութեան եւ նրա ժողովրդի անվտանգութեան միւսմալ երաշխիքները,
6. Մարդկային իրաւունքի եւ ստանձնած պարտաւորութիւնների կոպտագոյն խախտմամբ՝ գերիներին եւ պահուող անձանց չվերադարձնելը,
7. Միջազգային համապատասխան մանդատ ունեցող միակ օրինական կառոյցի՝ ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահութեան շրջանակներում Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման բանակցային գործընթացից փաստացի հրաժարումը, որով փորձ է արւում օրինականացնել ուժի կիրառումը, սանձազերծած պատերազմը, յարձակողապաշտութիւնը, Արցախի Հանրապետութեան տարածքի որոշակի հատուածի բռնազբաւումը եւ հրաժարումը ճանաչելու Արցախի ինքնորոշման իրաւունքը,
8. Ակնյայտ հակահայկական բնոյթ կրող «Շուշիի հռչակագրի» ստորագրումն ու վաւերացումը,
9. Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան տարածք Ատրպէյճանի զինուած ուժերի՝ 12 Մայիս 2021-ից փաստացի ներթափանցումը, առայսօր այդ տարածքում գտնուելը,
10. Հայաստանի Հանրապետութեան սահմանների երկայնքով հերթական ներթափանցման փորձերը, որի արդիւնքում ունեցը գոհ եւ վիրաւոր,
11. Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան նկատմամբ Թուրքիոյ լիակատար օժանդակութեամբ իրականացուող հարկադրանքի քաղաքականութիւնը՝

ՓՈՒԱՆ ԾԱՂԿԵՓՈՒՆՁԻ
(Մայրերու Տօնին Առիթով)



Խորեն Զինյ. Պերթիզյան



Մօրմեն բառ մը աղօթական
Կորով կու տայ բարոյական
Մօրմեն մաղթանք գրաւչական
Բուժիչ դէղ է ու բալասան:
Մօրմեն երգեր խաղաղական
Առիթներ են հանգստութեան
Մօր գործերը նուիրական
Քարոզներ են զոհողութեան:
Մայր պատուական, դուռն ծիածան
Մշտադալար, գարնան նման
Կարթ պատուաստ ու բնական
Ձայնդ ազդու եւ տիրական:
Քու ողջ կեանքիդ տեսողութեան
Մեծահոգի, միշտ յարգարժան
Երբ ձօնեմ երգ որդիական
Բառերն ընտիր ասան կ'ըլլան:
Դուն դռնբաց բիրտ օրհնութեան
Մաս ու նշխար տան սրբութեան
Ու գգուանքով վայելչական
Ճաղկաքաղ եւ եղեմական:
Հայ մայր տիպար, վեհ մշտական
Քու երթովը սուրբ, սրբագան
Տեսցինք կ'երջանական
Եւ օճախներ շէն կը մնան:

Թուրքիոյ նուրջ

ԹՈՒՐԵՒՈՅ ՄԵՋ ՊԱՇՏՈՆԱԴԵՍ ՎԱԵՐԱՅՈՒԱԾ Է «ՇՈՒՂԻԻ ՀՈՉԱԿԱԳԻՐ»-Ը

Թրքական պաշտօնական «Resmi Gazete» թերթը կը տեղեկացնէ, որ Թուրքիոյ եւ Ատրպէյճանի միջեւ 15 Յունիս 2021-ին ստորագրուած «Շուշիի Հոչակագիր»-ը պաշտօնապէս վաւերացուած է:

Թրքական «Yenicaggazetesi» կայքը անդրադարձած է հոչակագիրի վաւերացմանը՝ յիշեցնելով, որ հոչակագիրին մէջ նաեւ «հարաւային կազային միջանցք»-ին մասին շեշտադրումներ կան:

«Նախագահի թիւ 5340 հրամանագիրով վաւերացուած է Թուրքիոյ Հանրապետութեան եւ Ատրպէյճանի Հանրապետութեան միջեւ դաշնակցային յարաբերութիւններու մասին Շուշայի հոչակագիրը:



Հոչակագիրը կը նախատեսէ Թուրքիոյ եւ Ատրպէյճանի միջեւ բարեկամական եւ բազմակողմանի գործակցութեան խորացում: Երկու երկիրներու քաղաքական, տնտեսական, առեւտրային, մշակութային, առողջապահական, կրթական, մարզական եւ յատկապէս ռազմական ներուժի փոխօգտագործում եւ գործակցութեան ընդլայնում»:

ԹԱՏՐՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՈՒՄՆ ԱՌԹԻՒ ԱՐՏԱՄԱՆՈՒՄԾ ԽՕՍԲ

Փիթըր Սէլարդ

Քանի որ աշխարհը ժամ առ ժամ, վայրկեան առ վայրկեան կառչած է ամենօրեայ լուրերու հոսքին, կ'ուզեմ բոլորիդ ուշադրութիւնը հրաւիրել մեզի՝ ստեղծագործողներուս, մուտք գործելու այս դիւցազնային փոփոխութիւններու, տեսլականի եւ հեռանկարներու այս ժամանակաշրջանը: Մենք կ'ապրինք մարդկութեան պատմութեան անսխալեպ ժամանակաշրջանի մը մէջ, եւ մեր ապրած խոր ու հետեւանքային փոփոխութիւնները, մարդկային եւ ոչ-մարդկային աշխարհներու յարաբերութիւններուն մէջ, գրեթէ վեր են մեր խօսքը, արտայայտելու եւ ընկալելու կարողութիւնները:



Մենք չենք ապրիր 24-ժամեայ լրատուական շրջանակին մէջ, մենք կ'ապրինք ժամանակի եզրին: Թերթերն ու լրատուամիջոցները լիովին անզօր են հաղորդելու այն ամէն ինչը, որ մենք կը զգանք եւ կ'ապրինք:

Ռ՛ւր է լեզուն, շարժումը եւ պատկերը, որոնք մեզ թոյլ կրնան տալ ընկալելու այս խորքային փոփոխութիւնները, որոնք մէջէն կ'անցնին: Եւ այս օրերուն ինչպէ՞ս կրնանք մեր կեանքի փորձառութիւնը փոխանցել մարդոց՝ ոչ թէ որպէս հաղորդագրութիւն, այլ որպէս իրական կեանքի փորձ:

Թատրոնը փորձի արուեստն է: Աշխարհի մը մէջ, որ ծանրաբեռնուած է մամուլի լայնածաւալ արշաւներով, ամենօրեայ լրատուութեամբ, սարսափազդու կանխատեսումներով, ինչպէ՞ս կրնանք անցնիլ այս անվերջ կրկնութենէն անդին՝ զգալու կեանքի, բնութեան, ընկերութեան անսահմանութիւնը: Համաճարակի երկու տարիները թուլցուցեր են մարդոց զգացումները, սահմանափակել՝ մարդոց կեանքը, խզել են յարաբերութիւնները եւ մեզ հասցուցեր՝ մարդկային բնութեան տարօրինակ եւ գեռոյական կետին:

Ի՞նչ սերմեր պետք է տնկուին այս տարիներուն, որոնք են գերաճած եւ աւելորդ տեսակները տնկիներուն, որոնք պետք է ամբողջութեամբ բնաւորականապէս արմատախիլ ըլլան: Այսօր այնքան շատ մարդիկ կան այդ եզրին: Այնքան շատ է անտրամաբանական եւ անսպասելի բռնութիւնը, եւ այնքան շատ են այն համակարգերը, որոնք դաժանութիւն սփռող կառոյցներ են:

Ռ՛ւր են մեր յիշատակի արարողակարգերը: Ի՞նչ պետք է յիշենք: Որո՞նք են այն արարողութիւնները, որոնք թոյլ կու տան մեզի, ի վերջոյ, վերիմաստաւորուիլ եւ առնել այն քայլերը, որոնք ժամանակին երբեք չենք առած:

Տեսլականի, հեռանկարի, վերականգնումի եւ վերիմաստաւորման թատրոնը նոր արարողակարգերու կարիք ունի: Մեզի պետք է գուարճանք: Մեզի պետք է համախմբում: Մենք պետք է բաժնեկցինք այս տարածութիւնը, եւ մշակենք գայն՝ պաշտպանելով եւ պահպանելով հաւասարութիւնը:

Թատրոնը երկրի վրայ մարդոց, աստուածներու, բոյսերու, կենդանիներու, անձրեւի եւ վերածնունդի միջեւ հաւասարութեան տարածութեան ստեղծումն է: Թատրոնի մէջ այդ տարածութիւնը լուսաւորուած է թաք-

նուած գեղեցկութեամբ, որ կենդանի կը պահէ իմաստութեան եւ գեղեցիկ փոխազդեցութիւնը:

The Flower Ornament Sutra-ի մէջ Պուտտան կը թուարկէ մարդկային կեանքի ընթացքին հաստատակամութեան տասը տեսակներ: Ամենահզօրներէն մէկը կը կոչուի հաստատակամութիւն՝ բոլորը որպէս պատրանք ընկալելու: Թատրոնը միշտ ներկայացուցած է այս աշխարհի կեանքը որպէս պատրանք, որ մեզի կարելիութիւն կու տայ տեսնելու մարդկային պատրանքը, մոլորութիւնը, կուրուքիւնը, պարզութիւնը եւ ուժը: Մենք այնքան վստահ ենք, թէ ինչպէս կը նայինք այս ամէնուն, որ չենք յաջողիր տեսնել եւ զգալ այլընտրանքային իրողութիւնները, նոր կարելիութիւնները, տարբեր մօտեցումները, աննշմարելի յարաբերութիւնները եւ յաւերժական կապերը: Հիմա մեր միտքերուն, զգացումներուն, երեւակայութեան, պատմութեան եւ ապագայի թարմացումին ժամանակն է: Այս ամէնը չեն կրնար ընել միմեկ, մեկուսացուած աշխատող մարդիկ: Սա աշխատանք մըն է, որ պետք է ընենք միասին: Թատրոնը այս գործը համախմբուած տանելու համար է:

Արեւմտահայերէնի վերածեց՝ Վեհան Պարսումեան

«ԳԱՆՁԱՍԱՐ»
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

Խմբագիր՝ Զարմիկ Զիւլբոջեան-Պօղիկեան
Սրբագրիչներ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան
Վեհան Պարսումեան

Ձեւաւորող՝ Յովսէփ Զալօղլեան
Գրաշար՝ Անի Թովալեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան-Աղայեկեան
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պօղոսեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիւլբոջեան
Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:

Պրիմակետ

ՍՈՒՐԾ



Մարուշ Երամեան

Կար ժամանակ, երբ աչքերս կը բանայի եփուող սուրճի հոտին խնու- ողտումէն...

Հայրս սուրճ շատ կը սիրէր, բոլորին նման... Եւ կը խմէր ալ րիհա, արա- բերէն՝ հոտին վրայ...

Հայրս այնքան դժգոհութիւն յայտնեց, որ օր մըն ալ մայրս ըմբոստա- ցած, որոշեց...

Ասկէ ետք դո՛ւն քու սուրճդ պատրաստէ՛, ինչպէս որ կ'ուզես...

Որքան որ ետ երթամ յիշողութիւններուս մէջ, միշտ հայրս էր մեր տան սուրճը պատրաստողը...

Քու սուրճդ իրաւ տարբեր է, փեսայ՝ Յովհաննէս, - կ'ըսէր մօրս քեռկինը:

Հայրս յատուկ ծիսակատարութիւն ունէր սուրճ պատրաստելու... կը դնէր ջուրը սրճեփին մէջ, մե՛ծ ուշադրութեամբ կը չափէր նախ շաքարը...



Տարիներ ետք հայրս շաքարախտ ունեցաւ, սկսաւ սուրճը սատա խմել, բայց շարունակեց ինչ պատրաստել իր սուրճը...

Երբ պսակուեցայ, առաջին առաւօտը կանուխ ելայ եւ սուրճ պատ- րաստեցի...

Ելի՛ր սուրճ խմենք, - քեռքանքով ըսի նոր ամուսինիս, որ տակաւին կը քնանար:

Կ'երեւի պէտք էր արթնցնէի գիկը... կամ սպասէի, որ ինչ խնդրեր ու յետոյ պատրաստէի...

Նոր ամուսինս մէկ աչքը բացաւ եւ պարզօրէն ըսաւ...

Ես ալ չէի խմեր... մայրս ալ առտունները սուրճ չէր խմեր...

Չեղաւ: Չախողեցայ:

Այսօր ամբողջ աշխարհի վրայ մարդիկ սուրճ կը խմեն...

Հալեայի մէջ սուրճը ո՛չ թէ պատրաստելու, այլ խմելու յատուկ ձեւ կայ, մանաւանդ կիներուն համար...

Հայաստանի անկախութենէն ետք, երբ հայաստանցի կիներ սկսան Հա- լեայ գալ ապրանք գնել-տանիլ ծախելու համար...

Ուրիշ տեղ չեմ հանդիպած նման ձեւով սուրճի գաւաթ բռնելուն:

Հալեայցի կիները հաւատացած են նաեւ, որ սուրճը շատ օգտակար է մանուկներուն, թէեւ ոչ ոք կրցած է ըսել...

յաճախ կը լեցնէին սուրճը ամանին մէջ, որ «տաք ըլլայ, չորճուխին բերանը չայրի» եւ կը խմցնէին երկու-երեք տարեկան իրենց թոռներուն:

-Ճանըմ, համով իսկ չէ, - կ'ըսէր սուրճ չսիրող մայրս:

Մեծ քեռկինը՝ մարթնայի Նուարդը, որուն յաճախ կ'երթայինք, մէկ անգամ կարծեմ այդ ձեւով ինծի ալ սուրճ խմցուց...

-Լաւ, լաւ, չեմ տար, - ըսաւ մարթնայի Նուարդը:

Կը յիշեմ գլանածէ սեփ-սեւ բովիչը, որուն լայն կողմը դռնակ մը կար, ուրկէ կը լեցուէին սուրճին հատիկները, իսկ հատուածին կողմէն երկաթեայ բռնակ մը...

Մտնուն եթէ սուրճ չիմեմ, խելքս գլուխս չի գար, - կ'ըսէին:

Սուրճի փոքր գաւաթներուն շուրջ կը փսփսացուէին ամենէն վտան- գաւոր գաղտնիքները...

Սուրճը կարելի չէ միւսակ խմել:

Տակաւին մենք, մասնագետ սուրճ խմող հալեայցիներս, քանի մը տե- սակ սուրճ ունինք՝ «բարի եկաքի սուրճ»-ը, որ բոլոր հիւրասիրութիւններէն առաջ կը հրամցուի...

Կը յիշեմ Չապլէ Եսայեանի «Սիլի- տարի Պարտէզները»...

«Բացի հայրիկէս, որ օրուան ամեն ժամերուն եւ նոյնիսկ ծանր հոգերուն տակ ճնշուած միշտ լաւ տրամադրու- րեան մէջ էր, մեր տնտեսները թիրեալքի էին...

«Բայց եթէ լոտոս (հարաւային քամի) ըլլար, այդ վատ տրամադրու- րիւնը կ'երկարաձգուէր օրուան մէջ...

Ինչպէ՛ս կրնայ այսքան պարզ ըմպելի մը այսքան տարողունակ ըլլալ, այսքան մեծ տեղ գրաւել մարդոց առօրեային մէջ:

Գաւաթը փոքր է, այսինքն շատ ժամանակ պիտի չխլել գայն խմելը, հետեւաբար այդ կարծ միջոցին մէջ կարելի է ամբողջութեամբ թօթափել հոգերը...

Աշխատանքի ընթացքին սուրճի դադարներուն երկարելուն հետ, սուր- ճի գաւաթներն ալ մեծցան եւ սուրճը ինք տարբեր գգեստներ սկսաւ հագ- նիլ՝ կաթով, տարբեր համերու յաւելումներով եւ դադրեցաւ...

Կ'ըսեն թէ գինին ընկերային խմիչք է, իսկ թեյը՝ առանձնութեան խմիչքը:

Սուրճը այն մոգական խմիչքն է, որ կրնայ ինքզինք յարմարեցնել քու տրամադրութեանդ, ուրախ ես՝ «նախ սուրճ մը խմենք այս ուրախութիւնը մարտելու համար»...

ՄԻՅԱՆ ՀԱՅՍՏԱՆԻ ՄԷՋ. ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆԵԱՆ ԻՐ ՄԵՓԱԿԱՆ ԵՐԱԻՐԸ ԴԱՏԻ ՏՈՒՑ Է ԵՐՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԷՋ



Յարութ Սասունեան

Կրկն Գտնուող պետութիւններու ղեկավարներ, որոնք դատի տուած ըլլան իրենց կառավարութիւնները իրենց տապալումէն ետք, կամ իրենց ունեցուածքի բռնագրաման ի հետեւանք, սակայն ես չեմ ճանչնար ղեկավար մը, որ իր պաշտօնավարութեան ժամանակ շարունակած ըլլայ իր սեփական երկրին դէմ հայցը, օտարերկրեայ դատարանի մէջ: Ունիք ոչ թէ մէկ, այլ երկու հայցերու անհաւանական դէպքեր, գործ տարիներ առաջ Նիկո Փաշինեան ներկայացուցած է Մարդկային Իրաւունքներու Եւրոպական դատարան, ընդդէմ Հայաստանի Հանրապետութեան: Այս երկու դատական գործերը ընթացքի մէջ էին, երբ ան դարձաւ վարչապետ: Առաւել, Հայաստանի Հանրապետութեան դէմ Եւրոպական դատարանին մէջ քննուող հայց ունէր նաեւ Ալեքսանդր Արզումանեան՝ դեսպան նշանակուելու պահուն:

Ոչ ոք կրնայ մեղադրել քաղաքացի Փաշինեանը, նշեալ երկու հայցերը ներկայացնելուն համար՝ 2018-ին, վարչապետի պաշտօնը ստանձնելէն շատ առաջ, իր անունը մաքրելու նպատակով, երբ ինքն ու իր թերթը մեղադրու Նկատուած էին, Հայաստանի օրէնքները խախտելու մէջ: Այսուամենայնիւ, վարչապետ դառնալէ ետք, ան պետք է Եւրոպական դատարանէն յետո կոչէր հայցերը եւ հայցադիմում ներկայացնէր Հայաստանի դատարաններու մէջ, ինչ որ ըրաւ ներկայիս, պաշտօնը ստանձնելէն չորս տարի անց: Յունուար 2022-ին, իր «մամլոյ ասուլիսին», Փաշինեան խոստովանեցաւ, որ օրին մտածած է հայաստանեան դատարաններ բողոք ներկայացնելու մասին, սակայն, յարմար տեսած է նախ սպասել մինչեւ Եւրոպական դատարանի կողմէ որոշման կայացումը: Կը կարծեմ, որ անելի ճիշդ կ'ըլլար հայցերը յետո կոչել Եւրոպական դատարանէն եւ բողոք ներկայացնել Հայաստանի մէջ:

16 Փետրուար 2022-ին, «Արմենիա» տեղեկացուց, որ «Հայաստանի գլխաւոր դատախազ Արթուր Դաւթեան վճռաբեկ բողոք ներկայացուցած է դատարան՝ պահանջելով բեկանել Նիկոլ Փաշինեանի 2010-ի մեղադրական դատավճիռը եւ արդարացնել գայն: Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարանը 19 Յունուար 2010-ին Փաշինեանը մեղաւ որ ճաւելցած էր՝ 1 Մարտ 2008-ի ցոյցերու ժամանակ «զանգուածային անկարգութիւններ կազմակերպելուն» համար (որոնց հետեւանքով գոհուեցաւ 10 մարդ, որոյ ճարակ դարձան ինքնաշարժներ եւ թալանուեցան խանութներ): 16 ամիս թաքնուելէ ետք իշխանութիւններէն, Փաշինեան դատապարտուեցաւ ետքը տարուան ազատագրական, բայց պատիժը կրեց երկու տարիէն քիչ մը պակաս ժամ

կետով, ապա ազատ արձակուեցաւ ընդհանրական ներումի շնորհիւ: 18 Յունուար 2022-ին, Մարդկային Իրաւունքներու Եւրոպական դատարանը հրապարակեց «Փաշինեան ընդդէմ Հայաստանի» գործով վճիռը, գործ Փաշինեան ներկայացուցած էր այն ատեն, երբ ընդդիմադիր քաղաքական գործիչ էր: Եւրոպական դատարանը ճանչցած էր Փաշինեանի ազատութեան եւ անձնական անձեռնմխելիութեան, ինչպէս նաեւ խաղաղ հաւաքներու ազատութեան իրաւունքի խախտումները»:



Եւրոպական դատարանը վնասի հատուցման եւ դատական ծախսերու համար ոչ մէկ գումար յատկացուցած էր յօգուտ Փաշինեանի:

Հետաքրքրական է, որ Եւրոպական դատարանին մէջ Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչը որեւէ ապացոյց կամ առարկութիւն չէ ներկայացուցած Մարդկային Իրաւունքներու Եւրոպական դատարանին (ՄԻԵԴ)՝ պաշտպանելու համար Հայաստանի դատարանի 2010-ի վճիռը, ընդդէմ Փաշինեանի: Հասկնալի է, որ կառավարութեան ներկայացուցիչը դժկամութեամբ կը ներկայացնէր ապրիլու փոխարինող ապացոյցներ իր սեփական երկրի վարչապետ ինչ ոչ մ. . . : ՄԻԵԴ կը կայացնէ իր բոլոր որոշումները՝ կշռադատելով հայցուորին փաստերը, համապատասխան կառավարութեան ներկայացուցած ապացոյցներուն դէմ: Տուեալ պարագային, կառավարութիւնը չէր ներկայացուցած դէպքին մասին իր տեսակետը, քանի որ հայցուորին ու կառավարութիւնը անյարմար կերպով նոյն կողմէն էին: Կարելի է նաեւ նշել, որ Եւրոպական դատարանը սկսած է Փաշինեանի հայցը քննել միայն 2019-ին՝ 2018-ին անոր վարչապետ դառնալէն ետք, ինչ որ կը նշանակէ, որ ան բաւական ժամանակ ուներ իր դիմումը Եւրոպական դատարանէն յետո կոչելու համար: Ցաօք, Փաշինեանի հայցը Եւրոպական դատարանին մէջ ընդդէմ Հայաստանի, գայթակղեցուցիչ նիւթ տրամադրեց ատրպէյճանական մամուլին, որ գայն հրապարակեց՝ «Փաշինեան յաղթեց Հայաստանի, Եւրոպական դատարանին մէջ» վերնագրով:

Փաշինեանի երկրորդ հայցը Մարդկային Իրաւունքներու Եւրոպական դատարանին մէջ, ընդդէմ Հայաստանի Հանրապետութեան, ներկայացուած է անոր՝ «Հայկական ժամանակ» թերթի «Դարեակիզ» հրատարակչական ընկերութեան կողմէ: Թերթը 14 Հոկտեմբեր 2010-ին տպած էր «Ութն ետքը ցուցակի մէջ են» վերնագրով յօդուած՝ մեղադրելով Հայաստանի պետական քանի մը բարձրաստիճան պաշտօնեաներ՝ «թմրամիջոցներու, մարդկային «թրաֆիքինկ»-ի եւ դրամի լուացման յանցագործութիւններուն» մասնակցելու համար: Մեղադրեալներէն երեքը հայց ներկայացուցած էին Հայաստանի դատարան, ընդդէմ «Հայկական ժամանակ»-ի՝ գրապարտութեան համար: Փաշինեան կորսնցուցած էր դատը

թիւներուն յաջորդած՝ 2008-ի բողոքի ցոյցերուն, իր մասնակցութեան համար: Ան եղած է Լեւոն Տեր Պետրոսեանի նախագահական խումբի ղեկավարը: Մինչ այդ, Արզումանեան Հայաստանի արտաքին գործոց նախարարն էր: 2001-ին, ան հայ-թըրքական հաշտեցման յանձնախումբի իմասադիր անդամներէն մէկն էր: 2008-ի բողոքի ցոյցերէն ետք, Արզումանեան ձերբակալուեցաւ եւ մեղադրուեցաւ «պետական իշխանութեան իւրացման» մէջ: 22 Յունիս 2009-ին, Հայաստանի դատարանը մեղաւոր հռչակեց գայն, զանգուածային անկարգութիւններ կազմակերպելու մէջ, դատապարտեց ինկ տարուան ազատազրկման եւ համալսարանի պատճառով անմիջապէս ազատ արձակեց: 2009-ին, Արզումանեան դիմեց Եւրոպական դատարան, որ 2021-ին որոշեց, որ խախտուած են անոր արտայայտուելու եւ խաղաղ հաւաքներու ազատութեան իրաւունքները: Ինչպէս Փաշինեան, նոյնպէս ալ Արզումանեան դեսպան դառնալէ ետք նախընտրեց չվերցնել իր հայցը Մարդկային Իրաւունքներու Եւրոպական դատարանէն: Չեմ գիտեր, թէ ինչո՞ւ ՀՀ կառավարութիւնը, 2017-ին, անոր նշանակման գծով պայման չդրաւ վերցնելու դատական հայցը: ՄԻԵԴ պարտաւորեցուց Հայաստանի Հանրապետութեան՝ դեսպան Արզումանեանի վճարել 9000 եւրօ վնասի հատուցման եւ 2600 եւրօ դատական ծախսերու համար՝ տուրքերէն բացի:

Հետաքրքրական է գիտնալ, թէ աշխարհի վրայ կա՞յ ուրիշ երկիր մը, որուն վարչապետն ու դեսպանը իրենց պաշտօնը ստանձնելու պահուն ունեցած ըլլան անաւարտ դատական հայցեր օտարերկրեայ դատարաններու մէջ, ընդդէմ իրենց երկրին՝ միաժամանակ ստիպելով, որ Հայաստանի Հանրապետութիւնը իրենց վնասներուն հատուցումը եւ դատական ծախսերը վճարէ սեփական կառավարութեան պիտո՞ճէն:

Արեւելահայերէնի թարգմանեց՝
Ռուզաննա Աւագեան
Արեւմտահայերէնի վերածեց՝
Սեդա Գրիգորեան

ՈՒՔՐԱՆԻԱ... Սկիզբ՝ էջ 5

Եայի եւ Վիեթնամի պատերազմները, կամ՝ մինչեւ Հայոց Յեղասպանութիւնը, քիւրտերու բազմափուլ սպանդները:

Պատերազմէն «իւղտուողներուն» պարագան ալ յստակ է. առաջին հերթին՝ գէնք ու քարիւղ վաճառողները (եւ անոնց կամակատար

պետական մարդիկը): Չենք ուզեր հարցումները երկարել: Պատիժի արժանիներուն ցանկը գաղտնիք չի պարունակէր, սկսելով ցեղասպան թուրքիայէն, որ նոյն վարքագիծը կը շարունակէ այսօր, իբրեւ գործակից ունենալով Ատրպէյճանը, որոնց հետ խաղաղութեան դարաշրջան բանալու կը վագեն Երեւանի «բարձր քաղաքականութիւն» վարող իշխանաւորները:

www.kantsasar.com
www.kantsasar.com
www.kantsasar.com

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

- 

ԽՈՅ
Օգտուեցե՛ք շաբթուան դրական գարգացումներէն, մանաւանդ եթէ առկախ գործեր ունիք, գանոնք անպայման աւարտին հասցնելու նախաձեռնեցե՛ք, պիտի յաջողիք:
- 

ՑՈՒԼ
Խնդրայարոյց մի՛ ըլլաք այս շաբաթ: Վեճերէ ու բախումներէ հեռու մնացե՛ք, որովհետեւ վնասուողը դուք պիտի ըլլաք:
- 

ԵՐԿՈՒՐԵԱԿ
Դժուար շաբաթը պիտի դիմաւորեք, սակայն խոհեմութեամբ եւ աշխատանքով պիտի կարենաք դէպքերը ի շահ ձեզի առաջնորդել:
- 

ԽԵՑՁԵՏԻՆ
Հապճեպով որոշումներ մի՛ առնէք, այլ փորձառուն խորհուրդին դիմեցե՛ք, որպէսզի նոր նուաճումներ արձանագրեք:
- 

ԱՌԻՄ
Յաջողութենէն ետք թուլութեան մի՛ մատնուիք: Յաղթանակներով պարծենալը մանկամտութիւն է:
- 

ԿՈՅՍ
Ձեր հրապոյրը պիտի տարածեք ձեր շրջապատին մէջ, պիտի փայլիք եւ ուշադրութիւն գրաւեք:
- 

ԿԵՌՈՔ
Միութենական կեանքի մէջ լարուածութիւններ պիտի յառաջանան: Փորձեցե՛ք հանդարտեցնել կացութիւնը եւ մեղմացնել լարուածութիւնը:
- 

ԿԱՐԻՃ
Միրային կեանքի մէջ գարգացումներ պիտի արձանագրուին, որոնց դիմաց յստակ որոշումներ պիտի ակնկալուին ձեզ մէ:
- 

ԱՂԵՂՆԱՒՈՐ
Ձեր տազնապները բաժնեկցիլ փորձեցե՛ք մտերիմի մը հետ, հոգեկան խաղաղութիւն պիտի ունենաք եւ ձեզի տրուած խորհուրդներէն օգուտ պիտի քաղէք:
- 

ԱՅՇԵՂՋԻՐ
Աշխոյժ էք, դրական տրամադրութեամբ, պիտի կարծեք, թէ ամէն բան կրնաք իրականացնել, սակայն ատիկա դժուար է: Զանի մը նպատակ ճշդեցե՛ք եւ իրականացուցե՛ք այս շաբաթ:
- 

ՋՐՀՈՍ
Դուք ամէն գնով կը ջանաք ձեր կարծիքը պարտադրել շրջապատին: Մարդիկ կրնան շուտով չհաւատալ ձեր ըսածին, բայց օրերը պիտի փաստեն ատիկա:
- 

ՁՈՒԿ
Կոյր վստահութիւն մի՛ ունենաք ձեզ շրջապատողներուն նկատմամբ, մանաւանդ եթէ անոնք ձեզի հանգստութիւն չեն ներշնչեր:



ՊՏՈՒՂՆԵՐՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ ԴԱՐՉՈՒՅԷՔ

Պտուղները շատ օգտակար են բոլորիս, մանաւանդ մանուկներուն եւ պատանիներուն, որովհետեւ անոնք մեզի կը պարգեւեն անհրաժեշտ սնունդը՝ պայքարելու համար գանազան հիւանդութիւններու՝ շաքարախտի, սրտի հիւանդութիւններու եւ քաղցկեղի դէմ: Հետեւաբար, պտուղները կ'օգնեն, որ ապրիւնք աւելի առողջ ու աշխոյժ կեանք մը: Թուենք պտուղներու օգուտները:

-Պտուղները կը պարունակեն զանազան կենսական նյութեր (vitamins), որոնք կ'օգնեն որ պայքարիք հիւանդութիւններու դէմ եւ ըլլաք առողջ:

-Պտուղները կը պարունակեն քիւլիւր (fibres), որոնք օգտակար են մարտոդութեան եւ առաջը կ'առնեն պնդութեան:



-Պտուղները կը պարունակեն մեծ քանակութեամբ ջուր, որ անհրաժեշտ է մեր առողջութեան:

-Պտուղները քիչ քանակութեամբ ջերմութ (calorie) կը պարունակեն. եթէ մենք աւելի շատ պտուղ ուտենք քան անուշեղէն, կրնանք խուսափիլ գիրութենէ կամ սոնք ութենէ (obesity):

-Պտուղները կը պարունակեն antioxidants կոչուած նիւթեր, որոնք գլխաւորաբար կ'օգնեն, որ մարդիկ պայքարին քաղցկեղի դէմ, կամ խուսափին անկէ:

Թեւ ձեզ մէ շատեր յաճախակի կերպով չեն ուտեր պտուղի տեսակներ, սակայն նկատի ունենալով պտուղներու վերոյիշեալ օգուտները, պէտք է փորձեք օրական քանի մը պտուղ ուտել, նախընտրաբար տարբեր տեսակի, որպէսզի ունենաք բարեձեւ մարմին եւ ըլլաք առողջ ու կենսունակ:

ՍԻՐԵՐԳՈՒԹԻՒՆ



Չահրատ

| | |
|--|---|
| <p>Սեւ հագնիմ Ամպ հագնիմ անձրեւ հագնիմ Ցաւը սրտիկս է այրեր Աշնան չոր տերեւ հագնիմ</p> | <p>Տօն ըլլայ Իմ սիրածս հոն ըլլայ Ծաղիկը շուտ կը թոռմի Սիրածս կոկոն ըլլայ</p> |
| <p>Հուր ժողվեմ Իմ սիրածս լուր ժողվեմ Հուրը գողնան ու երթան Ես նստիմ փրփուր ժողվեմ</p> | <p>Գինի տամ Մարդ չտեսնէ գաղտնի տամ Վարդ այտերը կարմրեան Համբուրեմ երանի տամ</p> |
| <p>Լուռ քալեմ Ցաւը սրտիս ծուռ քալեմ Երբ հանդիպիմ սիրածիս Այ հարց չտամ ուր քալեմ</p> | <p>Տուն մտնեմ Տան սեմէն ժպտուն մտնեմ Գըլուխս դընեմ ուսին Ու երջանիկ քուն մտնեմ</p> |
| <p>Լոյս իյնայ Աչքերուն թող յոյս իյնայ Այդ աչքերովն երբ նայի Նայուածքը հոգւոյս իյնայ</p> | <p>Երագիս Աստղ մը գայ նստի սագիս Ես այդ սագով տաղ ըսեմ Աստղերը թող լսեն գիս</p> |
| <p>Հով ըլլամ Հովուն պէս գինով ըլլամ Սիրտս գարնէ խենթի պէս Երբ սիրածիս քով ըլլամ</p> | <p>Եար ըսեմ Սիրածիս գոհար ըսեմ Թէ մեռնիմ լայ ետեւես Ողջնամ մի լար ըսեմ</p> |

Մարզական



Ռաֆֆի Սիկսիան

ՏԵՂԱԿԱՆ

«ՃԱԼԱԱ» ՅԱՐԹԵՑ «ՃԵՅՇ»-ԻՆ

21 Մարտին, Սուրիոյ տղոց պասքեթի մրցաշարքի տասնվեցերորդ շրջափուլի մրցումներուն, որ տեղի ունեցաւ Զալէայի «Քալաա» գլխաւոր դահլիճին մէջ, «Քալաա» խումբը 84-74 կետով յաղթեց «ՃԵՅՇ»-ին:




Խաղի առաջին քառորդը ավարտին հասաւ «ՃԵՅՇ»-ի օգտին 18-16 կետով, իսկ «Ճալաա» խումբը 17-13 կետով գերազանցեց երկրորդ քառորդին, այնուհետեւ «ՃԵՅՇ»-ը երրորդ քառորդին յառաջդիմեց 19-14 կետով, իսկ «Ճալաա»-ը յաղթեց չորրորդին 19-16 կետով: Խաղի երկարացումէն ետք, «Ճալաա» տասը կետի տարբերութեամբ 84-74-ով յաղթական ավարտեց խաղը:

Մինչ այդ «Քարամէ»-ն յաղթած էր «Սաուրա»-ին՝ 101-71 կետի դիմաց, «Նաուաիր»-ը՝ «Չըթին»-ին՝ 71-67 կետի դիմաց, իսկ «Ուախտէ»-ն «Թալիա»-ին՝ 94-40 կետի դիմաց:

ՀԱՅԿԱԿԱՆ

ՄԱՐՄԱՄԱՐԶԻԿ ՎԱՅԱԳՆ ԴԱԹԵԱՆ ԴԱՐՁԱՐ ԱԵՆԱՐՅԻ ԳԱՐԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹԵԱՆ ՈՍԿԵԱՅ ՍԵՏԱԼԱԿԻՐ

Հայաստանի մարմնամարզի հաւաքականի անդամներէն երկուքը կրկին մետալներն առնուածն աշխարհի գաւաթի խաղարկութեան ընթացքին:



Եգիպտոսի մայրաքաղաք Գահիրէի մէջ ընթացող աշխարհի գաւաթի խաղարկութեան հերթական փուլին, Հայաստանի ընտրանի անդամ Վահագն Դաւթեան օղակներու վարժութեան մէջ դարձաւ ոսկեայ մետալակիր, իսկ Նժոյգ-թափերու վարժութեան մէջ Յարութիւն Մերտիսեան նուաճեց արծաթե մետալ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՃՈՅՈՎԻՉ ՎԵՐԱԴԱՐՁԱՐ ԱՌԱՋԻՆ ԴԻՐԸ

21 Մարտին, Թենիսի Միջազգային Դաշնութիւնը հրապարակեց արհեստավարժ թենիս խաղացողներուն միջազգային նոր դասաւորումը:



Սերպ Լովաք ճոյզովի վերադարձաւ առաջին դիրք (8465), մինչ ռուս Տանիլ Ետսվետել Նահանջեց երկրորդ դիրք (8445):

Իսկ սպանացի Ռաֆայէլ Նատալ դիրքի մը ոստումը արձանագրելով այժմ կը գրաւէ երրորդ դիրքը (7715):

Վերջապէս, ռուսահայ Կարէն Խաչանով կը գտնուի 28-րդ դիրքին վրայ:

ԽԱՉՔԱՆ (ՄԻ 383)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

| | | | | | | | | | | | | |
|----|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | | | | |
| 5 | | | | | | | | | | | | |
| 6 | | | | | | | | | | | | |
| 7 | | | | | | | | | | | | |
| 8 | | | | | | | | | | | | |
| 9 | | | | | | | | | | | | |
| 10 | | | | | | | | | | | | |
| 11 | | | | | | | | | | | | |
| 12 | | | | | | | | | | | | |

- Հորիզոնական**
- 2ուկ որսալու ճանկ: Ծեփի համար գործածուող ճերմակ հանածոյ: Հայկական ժողովրդական նուագարան:
 - Անձնական դերանուն: Հակառակ՝ դէ, ոգի:
 - Յակոբ Օշականի վեպերէն (3 հատոր): Շաղկապ:
 - Չարգացած, կրթուած:
 - Անձնական դերանուն: Հակառակ՝ շաղկապ: Չարագործութիւն, սպանութիւն:
 - Ժխտական նախածանց: Դասակարգ: Հակառակ՝ ժամանում:
 - Հակառակ՝ ցուցական դերանուն: 490: Երկինջին:
 - Կտրել: Ամբողջ:
 - Համացանցային ձայնասփիւռ: Բուրդ:
 - Այն քաղաքը, ուր Զրիստոս գործեց իր առաջին հրաշագործութիւնը: Բերիոյ Հայոց Թեմի «Այգ» մատենաշարով հրատարակուած սուրիահայ գրող Դոկտ. Հուրի Ազեգեանի արաբերէնէ թարգմանած բանաստեղծական գիրքը. «Ո՛վ գեղեցիկ»:
 - Եական բայ: Նիհար:
 - Իրերայաջորդ տառեր: Սեւանայ լիճի ձկնատեսակներէն:

- Ուղղահայեաց**
- Ասացուածքը կ'ըսէ. «Խորհուրդ մարդկանց, Աստուծոյ»: Հայոց 9-րդ ամիսը:
 - Սրբուհի մը: Արական անուն:
 - Համակրանք, կարեկցութիւն:
 - Կերակուրի հիւթ (տոս): Իգական օտար անուն:
 - Մէկը:
 - Անապատի մէջ ուղեւորներու խումբ: Ահաւոր:
 - Լուբիայի տեսակ: Սուրիական լրատու գործակալութիւն:
 - Հակառակ՝ երկ.....: 5300:
 - Տարտղիլ: Կրկնուած ձայնաւորներ:
 - Կրկնուած բաղաձայններ: Հակառակ՝ 109: Տարի: Հակառակ՝ բուրդ:
 - Հաստատական պատասխան: Փոքրացնող մասնիկ: Նոր:
 - Գետեւայ խօսքի հեղինակին մականունը. «Խօսքի մէջ լինենք համեստ, մեղմ ու քաղաքավարի, իսկ գործի մէջ որչափ կարող ենք ուժեղ, խիստ ու յանդուգն»: Տառի մը անունը:

ԽԱՉՔԱՆ (ՄԻ 382)

| | | | | | | | | | | | | |
|----|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | Գ | Ե | Ղ | Ի | Ն | Ճ | Ա | Յ | Ն | Ը | Վ | |
| 2 | Ա | Ե | Ռ | Ա | Կ | Ա | Մ | Զ | Ա | | | |
| 3 | Ս | Ա | Կ | Ի | Ն | Ք | Ր | Մ | Ի | Տ | | |
| 4 | Ո | | | Մ | Ա | Կ | Ա | Ն | Ի | Կ | Ա | |
| 5 | Լ | | | Տ | Ո | Ր | Փ | Կ | Ա | Ի | | |
| 6 | Մ | Կ | Ղ | Ա | Լ | Ո | Ջ | Ա | | | | |
| 7 | Ա | Խ | Կ | Լ | Ա | Փ | Ա | Ո | Մ | | | |
| 8 | Ա | Մ | Ա | Ո | | Կ | Ո | Մ | Ս | Ք | | |
| 9 | Տ | Ա | Կ | Ա | Տ | Խ | Ո | Լ | Ա | | | |
| 10 | Ա | Կ | | Ի | Ա | Կ | Լ | Ե | Լ | | | |
| 11 | Մ | Ո | Լ | Չ | Ե | Ղ | Ի | Չ | Խ | Ա | Ն | |
| 12 | Ր | | Ա | Ղ | Ր | Ո | | Խ | Ա | Կ | | |

| | | | | | | |
|--|---|--|--|--|---|--|
| Երկուշաբթի 28/3 7° 18° | Երեքշաբթի 29/3 9° 20° | Չորեքշաբթի 30/3 9° 22° | Հինգշաբթի 31/3 10° 23° | Ուրբաթ 1/4 13° 26° | Շաբաթ 2/4 15° 28° | Կիրակի 3/4 13° 28° |
|--|---|--|--|--|---|--|

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԸՐՋԵՃԱՆ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ «ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ»-ԻՆ ՄԷՋ

Համագգայինի «Նիկոլ Աղբալեան» Մասնաճիւղի Գրական Յանձնախումբը հաւատարմով, որ ընթերցումը կը բարելաւէ հայ պատանին թառապաշարն ու արտայայտչա-

վարժարաններու Ե. Ե. Կարգերու աշակերտները, որոնք մասնակցած էին հետեւեալ դպրոցներէն՝ Ազգ. Միացեալ վարժարանէն, Հայ Աւետ. Բեթել երկրորդ վարժարանէն, Լ. Նա-



ծելերը, անոր առջեւ բանալով բառերու, գաղափարներու լայն աշխարհ մը, յարմար նկատեց կազմակերպել ընթերցանութիւնը խրախուսող ու հայ պատանին մօտ գիրքին նկատմամբ հետաքրքրութիւն յառաջացնող ձեռնարկ մը:

Յայտարարուեցաւ ընթերցանութեան մրցոյթ, իսկ ձեռնարկը նուիրուեցաւ Ամենայն Հայոց Բանաստեղծ Յ. Թումանեանի ծննդեան 153-ամեակին, նկատի ունենալով, որ Թումանեան փոքրիկներուն սիրելի գրողն է, Եւ անոր հեքիաթները դաստիարակիչ բնոյթ ունին:



Արդարեւ, Շաբաթ, 19 Մարտ 2022-ի երեկոյեան ժամը 5:00-ին, Հայլէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահէն ներս տեղի ունեցաւ «Հեքիաթներու Աշխարհ» ընթերցանութեան մրցոյթը:

Ձեռնարկին ներկայ էին հայկական վարժարաններու տնօրէնները, ինքնակազմակերպութիւններու ներկայացուցիչները, մասնակից աշակերտներուն ծնողները, ինչպէս նաեւ օրուան դատական կազմի անդամներ՝ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւ արժանապատիւ Տէր Խորէն Զինյ. Պերթիգլեան, Հայագիտական Հիմնարկի դասախօս գրող է պատմաբան դոկտ. Հուրի Ազեգեան եւ «Հայ Հորիզոն» առցանց կայանի հաղորդավար՝ Սիւզի Խշուածեան-Փիլաւեան:

Օրուան բեմավար Վեհան Պարսումեան հրաւիրեց հայկական

ճարեան-Գալուստ Կիւլպէնկեան Կեդր. վարժարանէն եւ Կրթասիրաց Ս. Չեմպերճեան երկրորդ վարժարանէն:

Քսաներկու աշակերտներ մեծ խանրավառութեամբ նախ ընթերցեցին իրենց ընտրած ու ընթերցման համար պատրաստած Թումանեանի հեքիաթը, ապա յանապատրաստից հեքիաթներ, որմէ ետք դատական կազմը իր նկատողութիւնները եւ թելադրանքները տուաւ մասնակիցներուն: Ապա ներկաները ակընդրեցին Յ. Թումանեանի մասին տեսերիզ մը, զոր պատրաստած էր Աննա Քոչեան-Մատթեոսեան:

Աշակերտներուն հեզասահ ընթերցումն ու գովելի պատրաստութիւնը դժուարութեան մատնեց գերազանցներու ընտրութեան պատրաստուող դատական կազմը:

Այնուհետեւ բոլոր մասնակիցները բեմ բարձրացան եւ գնահատուեցան «Ն. Աղբալեան» Մասնաճիւղի ատենապետ Գեորգ Աղապեանի ձեռամբ, ստանալով Սուրիոյ Շրջանային Վարչութեան հրատարակած Յակոբ Օշականի «Մկրտիչ Պեշիկթաշեան Վկայութիւններ ու Զերթուածներ» գիրքը:

Հասած էր այն ժամը: Պատանիները անհամբեր կը սպասէին Դատական կազմին որոշումին, երբ յանձնախումբին վարչական կազմը՝ Սոնա Աղամեան-Չալօղլեանը հրաւիրեց Սիւզի Խշուածեան-Փիլաւեանը յայտարարելու մրցոյթին արդիւնքը:

Ե. Կարգէն առաջին հանդիսացաւ Ազգ. Միացեալ վարժարանէն Գառնի Սիրուն Զելադայեան:

Երկրորդ հանդիսացաւ Լ. Նաճարեան Գ. Կիւլպէնկեան Կեդր. վարժարանէն Արեւի Շառոյեան, իսկ երրորդ հանդիսացաւ Լ. Նա-

ՀՄԸՄ-Ի ՀԱԼԷՊԻ ՄԱՍՆԱՃԻՒԴԻ ՄՈՆԿԻ ԵՒ ԳԱՅԼ-ԱՐԾՈՒԿ ՄԻԱԽՈՐՆԵՐԸ ՆՇԵՃԻՆ ՄԱՅՐԵՐՈՒ ՏՕՆԸ

Ամեն տարի Մարտ ամսուն ՀՄԸՄ-ի Հալէպի մասնաճիւղի գայլիկները կը նշեն մայրերու տօնը յարգելու եւ մեծարելու համար իրենց մայրերը:

դեցիկ երգերով խանդավառեցին ներկաները: Յաջորդաբար բեմ բարձրացան Կարմիր, Կապոյտ եւ Նարնջագոյն վոհմակ-երամները եւ ներկայացուցին մայրական սերն ու



Այս տարի նոյնպէս Մոնկի եւ Գայլ-Արծուիկ միաւորները Կիրակի, 20 Մարտ 2022-ին, ՀՄԸՄ-ի պարտեզէն ներս կրկիկ յայտագիրով մը նշեցին մայրերու տօնը:

գուրգուրանքը արտացոլացող ամունքներ: Վերջապէս Դեղին, Կանաչ եւ Ճերմակ վոհմակ-երամները հանդէս եկան դարձեալ փունջ մը գեղեցիկ երգերով:

Բացման խօսքը արտասանեց

Սկաուտ խորհուրդը այս առթիւ



քոյր Նայիրի Ազարիկեան-Արոյեանը: Նախ ան անդրադարձաւ թէ որքան կարեւոր է մօր դերը մեր ազգային եւ ընկերային կեանքէն ներս, ապա շնորհակալութիւն յայտնեց բոլոր մայրերուն, որոնք իրենց գաւաակները կը վստահին ՀՄԸՄ-ին եւ անոր հետ համագործակցաբար կը պատրաստեն ազգային գիտակցութեամբ զինուած ապագայի հայ մարդը:

պատրաստած էր գեղեցիկ յուշանուէրներ, որոնք վաճառուեցան ներկաներուն, ապա ընտրուեցան օրուան բախտաւոր չորս մայրերը:

Աւարտին, մասնաճիւղի խմբապետ՝ եղբ. Յակոբ Ուրիշիկեան շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն, որոնք միշտ նեցուկ կը կանգնին միութեանս բոլոր գործունէութիւններուն: Օրուան յայտագիրը փակուեցաւ «Գայլիկ եւ ՀՄԸՄ-ի» քայլերգով:

Մոնկի միաւորի քոյրերն ու եղբայրները մայրերու նուիրուած գե-

Թղթակից

ճարեան-Գ. Կիւլպէնկեան Կեդր. վարժարանէն Մեղեդի Չիթճեան:

2. Կարգէն առաջին հանդիսացաւ Ազգ. Միացեալ վարժարանէն Աւետիս Չիլմբոշեան:

Երկրորդ հանդիսացաւ Ազգ. Միացեալ վարժարանէն Նարոտ Սաղպազարեան, իսկ երրորդ՝ Ազգ. Միացեալ վարժարանէն Բալիկ Մարգեան:

Գերագանց ընթերցողները ստացան յատուկ յուշանուէրներ Գրական Յանձնախումբին կողմէ, ապա աւարտին դոկտ. Հուրի Ազեգեան շնորհակալութիւն յայտնեց հայկական վարժարաններու տնօրէններուն եւ ծնողներուն՝ իրենց

աջակցութեան եւ համագործակցութեան համար: Ան անդրադարձաւ հայերէնի պահպանելու ի խնդիր տարուող աշխատանքներուն, դիտել տալով, որ այս աշակերտները իրենց հեզասահ ընթերցումով, վերստին ապացուցեցին, որ ազգը չէ մեռած եւ կ'ապրի:

Ապա Տէր Խորէն քահանային «Պահպանիչ» աղօթքով ձեռնարկը իր աւարտին հասաւ:

Համագգայինի «Ն. Աղբալեան» Մասնաճիւղի Գրական Յանձնախումբը պիտի շարունակէ նման մրցաշարեր կազմակերպել տարբեր կարգերու համար:

Թղթակից